ՔԱՐՄԻԼԵ ՎԻՐԱԲՅԱՆ

ԱՐՏԱՀԱՅՏՉԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ ՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Գեղագիտական դաստիարակությունը բազմակողմանի դաստիարակության անբաժանելի մասն է: Մասնագիտական ուսումնասիրությունները և մանկավարժական աշխատանքի մեր փորձը ցույց են տվել, որ հենց նախադպրոցական տարիքում են արդյունավետ զարգանում երեխաների գեղարվեստական կարողությունները, խորանում գեղագիտական դաստիարակության հետագա հիմքը:

Մեր մանկապարտեզներից շատերում, հատկապես աղետի գոտում, գեղագիտական դաստիրակությունը գտնվում է ցածր մակարդակի վրա, որովհետև շատ մանկապարտեզներ տնակային պայմաններում են և չունեն անհրաժեշտ պայմաններ: Դրա հետևանքով էլ տուժում են երեխաները: Առանձին մանկապարտեզներում ավագ խմբի երեխաները չգիտեն նկարելու պարզ և անհրաժեշտ կանոնները, չունեն որոշակի կարողություններ և ունակություններ, որոնք խիստ կարևոր են ցանկացած գեղարվեստական գործունեության համար: Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դպրոցին նախապատրաստվող խմբում երեխաները նկարչության պարապմունքի ժամանակ դժվարանում էին ճիշտ ընտրել գույները, չէին կարողանում օգտագործել թուղթը, ճիշտ պատկերել առարկան և այլն:

Հանրահայտ է, որ խորաթափանց և մասնագետ դաստիարակների աշխատանքի շնորհիվ նկարելու ժամանակ ի հայտ են գալիս երեխաների մտավոր կարողություններն ու ինքնուրույնությունը, և շատ հաճախ, առանց որևէ մեկի ցուցումների, նրանք սկսում են ճիշտ նկարել: Շատ ծնողներ, որոնք հեռու են այս աշխատանքից, կարծում են, թե երեխաները նախադպրոցական տարիքում գիտելիքների կարիք չեն զգում, պարզապես նկարում են հաճույքի համար: Իհարկե, դա այդպես չէ: Երեխաների մտածողության զարգացման, ակտիվության ընդլայնման և ինքնուրույնության դաստիարակության գործում անգնահատելի դեր ունեն մանկապարտեզն ու մանկավարժ-դաստիարակը: Կոլեկտիվ դաստիարակության պայմաններում երեխաների նկարչական

ունակությունների զարգացման հարցը չի կարող լուծվել պատահական ազդեցության ներքո: Հենց նախադպրոցական համակարգը, որտեղ երեխաները համախմբվում են ըստ տարիքի, պահանջում է մշակել սովորեցնելու և դաստիարակելու միջոցները: Դաստիարակին խիստ անհրաժեշտ է իմանալ սովորեցնելու, դաստիարակելու գաղտնիքները, ղեկավարել երեխայի զարգացման ընթացքը, այդ ուղղությամբ գտնել արդյունավետ ու ստեղծագործական մեթոդներ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երբ դաստիարակը մեթոդապես ճիշտ է ղեկավարում երեխաների ուսուցման պրոցեսը, ապա նա կհասնի որակական բարձր արդյունքի: Հատկապես սա ցայտուն է երևում նկարչության պարապմունքների ժամանակ: Մեր ուսումնասիրություններից եկել ենք այն եզրակացության, որ նկարչության համար անհրաժեշտ է 1. մանկապարտեզներում ստեղծել հարմարավետ պայմաններ, ունենալ անհրաժեշտ պարագաներ, որոնք կհամապատասխանեն գեղագիտական դաստիարակության պահանջներին. 2. համոզվել, որ մանկական նկարչությունը աննպատակ չէ և հետապնդում է շատ կարևոր խնդիր. 3. դաստիարակների նկարչական գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է նրանց ցույց տալ մեթոդական օգնություն. 4. մանկապարտեզներում նկարչության պարապմունքների ժամանակ անպայման պետք է նկատի ունենալ երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունները:

Ամենից առաջ անհրաժեշտ է մտածել, թե նկարչությունը նախադպրոցական տարիքի երեխայի զարգացման գործում ինչ տեղ պետք է զբաղեցնի:

Նկարչության առանձնահատկությունը որպես տպավորությունների արտահայտման միջոց, այն է, որ օգտվում է պատկերներից՝ առարկաների ամբողջականության մեջ նրանց արտաքին տեսքի փոփոխումով: Երեխան, նկարելու գործընթացում յուրացնելով առարկաների պատկերման ձևերը, հնարավորություն է ունենում առարկան պատկերել ցանկացած ձևով, առանց որևէ մեկի օգնության: Նկարչության մեջ կարևոր որակ է գույնի ճիշտ ընտրությունը: Ծանոթանալով գույնի մի քանի երանգների՝ երեխան ձեռք բերած գիտելիքները, առարկան գունավորելիս, կիրառում է նկարի մեջ - երեխան արդեն կարող է ինքնուրույն որոշել, թե ի՞նչ գույնով է նկարելու, դրանք գտնել մատիտների և ներկերի մեջ ու օգտագործել նկարելիս: Իսկ դրան համապատասխան՝ փոխվում է թե՛ նկարի բովանդակությունը, թե՛ ուսուցման բնույթը:

Որպեսզի երեխաները լավ յուրացնեն սկզբնական գիտելիքները չափի, գույնի և ձևի մասին, բավական է ընտրել այնպիսի առարկա, որի վրա որոշակի առանձնահատկություն-ները վառ են արտահայտված և իմաստով նման են իրար: Այդ առարկայի օրինակով երեխան սովորում է նկարել: Պարապմունքի ժամանակ, բացի առարկային վերլուծությունից, դաստիարակը կարող է կիրառել նաև այնպիսի մեթոդներ, որոնք ցույց են տալիս նկարի հաջորդականությունը, նկարվող պատկերի նմուշները: Նա կարող է հարց տալ երեխաներին, բացատրել նկարի առանձին մասերը: Այնուհետև սկսվում է այն պահը, երբ երեխան յուրացրածը ինքնուրույն կարող է կիրառել այլ առարկաներ ու պատկերներ նկարելիս: Այդ ընթացքում պարտադիր չէ, որ բոլոր երեխաները նկարեն միևնույն առարկան:

Մանկապարտեզում նկարչության համար նախատեսված թեմաներն ունեն որոշակի նպատակներ ու խնդիրներ:[1] Դրանք նպաստում են երեխաների գեղագիտական ճաշակի, ինքնուրույն մտածելու և ակտիվության զարգացմանը: Նկարչության ծրագրում հարաբերականորեն տրվում է առարկային կառուցման, գույնի և ձևերի պարզունակ գիտելիքների ծավալը: Դրանց նախասկզբնական յուրացման համար նախատեսված են քիչ պարապմունքներ: Ցանկացած, նույնիսկ շատ քիչ արտահայտչական հնարքների սահմաններում երեխաները պետք է կարողանան դրսևորել իրենց տպավորությունները, զգացմունքները և ցանկությունները: Դրա համար ստացված գիտելիքներն ու կարողությունները պետք է օգտագործվեն՝ օգտվելով անձնական փորձից և ինքնուրույն ձեռք բերած արտահայտչական միջոցներից: Նախադպրոցականը սովորում է իրականությունը ըմբռնել, հասկանալ և պատկերավոր արտահայտել:

Կերպարվեստային գիտելիքները երեխաների մոտ ծնվում և զարգանում են մտավոր ու զգայական գիտելիքների հիման վրա: Ճիշտ չէ մտածել, թե երեխան իր զգայնության շնորհիվ ամեն ինչին նայում է նկարչի աչքերով:

Երեխայի հետաքրքրասիրությունը լայն է ու բազմաբնույթ: Իր գիտակցական զարգացման և ինքնուրույնության շնորհիվ երեխան արդեն կարողանում է տիրապետել նկարչության պարզունակ ձևերին ու մեթոդներին: Երեխաներին սովորեցնելով նկարել՝ մենք նրանց ուղեկցում ենք առարկաների և երևույթների առանձնահատկությունների իրական ըմբռնմանը, օգնում ընդ-

---

[1] Տե՛ս Типовая программа воспитания и обучения в детском саду. Под ред. Р.А.Курбатавой и Н.Н.Поддьякова. М.Просвещение. 1984.

հանուրից առանձնացնել այն, որն իրենց համար բնորոշ է: Իսկ հետո այդ յուրօրինակության մեջ սովորեցնում ենք այն բնորոշը, որը առարկաների մի խմբին տարբերում է մյուս խմբից: Միայն այդ ճանապարհով է հնարավոր երեխաներին սովորեցնել նկարի գիտակցական արտահայտչությունը: Դաստիարակը պետք է լուրջ ուշադրություն դարձնի հատկապես գեղարվեստական ստեղծագործության օրինաչափություններին: Իսկ վերջինիս գործընթացը սկսվում է մտքի ձևավորմամբ: Նախադպրոցական տարիքի երեխային հատուկ է մտքի անկայությունը, նրա ոչ լրիվ գիտակցումը: Դաստիարակի խնդիրն է զարգացնել երեխայի մտքի կայունությունը հասցնելով որոշակի մակարդակի: Երեխան սկսում է հասկանալ, թե ի՞նչ է նշանակում մտքով գործել: Իսկ հետագայում նրան կարելի է տալ միայն գաղափարի ուրվագիծը դրա իսկականը թողնելով երեխայի հայեցողությանը: Այս եղանյակով երեխայի մոտ սկզբում զարգանում է միտքը, իսկ հետո նոր անցնում գործնական կատարմանը: Ուսուցման ընթացքում գերադասելի է այն վիճակը, երբ ժամանակին դաստիարակի կողմից երեխային տրվում է մտահղացման գաղափարը: Խիստ կարևոր է նաև, որ ակտիվանա երեխայի միտքն ու երևակայությունը, ինքնուրույն աշխատելու, գործելու կարողությունը, պարզորոշ գիտակցի, հասկանա, թե ի՞նչ է նկարում և ի՞նչպես է նկարելու:

Նախադպրոցականը որքան լավ տիրապետի նկարելու տեխնիկային, այնքան նրա ձեռքերը կհմտանան, կդառնան շարժունակ, իսկ նկարի արտահայտման ձևը կլինի կենդանի և անհատական:

Երեխայի մոտ գիծը աշխույժ է, թեև արտահայտման ձևը պարզունակ է, բայց հստակ: Նրան պետք է սովորեցնել նաև ստեղծելու արտահայտչական կերպարներ: Երեխաները պետք է օգտագործեն արտահայտչամիջոցների առանձին ձևեր, ամենից առաջ մեծությունը (չափը), ձևը, գույնը և այլն: Երբեմն նրանք պատահաբար օգտագործում են այդ միջոցները, չնայած դեռևս չեն տիրապետում դրանց, որոշ դեպքերում էլ չեն գիտակցում այդ միջոցների նշանակությունը: Նման դեպքում դաստիարակի խնդիրն է երեխաների գիտակցությանը հասցնել իրենց ստեղծած կերպարի արտահայտչականությանը և դրա պատճառներին: Օգնում են երեխաներին նաև հայտնի հեքիաթները, խաղալիքները կամ քանդակները: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, երբ երեխան իրադրությունը արտա-

հայտում է սյուժեի ամբողջականության մեջ, ապա նա կատարում է ստեղծագործական մտքի «ծախս»:

Միայն 6-7 տարեկան երեխաները, որոնք լավ են տիրապետում նկարչությանը, կարող են մի քանի պարապմունքների ընթացքում, գլխավոր թեմայից չշեղվելով, կատարել մեկ սյուժետային հորինվածք: Սյուժետային նկարչության մեջ դաստիարակի դերն է գեղարվեստական ստեղծագործություններից կամ շրջապատող կյանքի երևույթներից առանձնացնել կարևորը: Սյուժետային գաղափարը տրվում է ոչ միայն հիմնական գործող անձերի պատկերմամբ, այլ նաև նկարի տարածական կոմպոզիցիայով: Երբեմն երեխաները ձգտում են համաչափ կոմպոզիցիայի, որը ստեղծում է համաչափության և հանգստի զգացում: Բոլոր այն դեպքերում, եթե դա հնարավոր է դառնում, ցանկալի է խրախուսել նման ձգտումը: Իսկ եթե անհրաժեշտ է նկարին տալ շարժում, ապա պետք է երեխաներին հնարավորություն ընձեռնել համաչափությունից և խախտել այն: Սակայն, առանց մանկավարժի հատուկ պարզաբանումների, երեխաները չեն համարձակվում խախտելու այդ սկզբունքը: Նկարչության պարապմունքի ժամանակ (թիվ 2-րդ նախակրթական դպրոցին նախապատրաստվող խումբ) առաջարկվեց նկարել ծառ՝ քամու ժամանակ: Երեխաները, հասկանալով, թե ինչպես է փոխվում ճյուղերի ուղղությունը և ինչպես է նկարը փոխում իր բնույթը, հաճույքով կրկնում են այդ պատկերները՝ նորության արտահայտչության գաղափարի մեջ: Իհարկե, նկարի կոմպոզիցիայի կառուցվածքի մեջ չկա ոչ մի կանոն, և ցանկացած բովանդակություն կարելի է արտահայտել տարբեր ձևով: Շատ կարևոր է, որ երեխաները ճիշտ օգտագործեն թուղթը և ոչ թե միատեսակ ուղղանկյուն ձևի թղթի վրա հարմարացնեն ցանկացած կոմպոզիցիա՝ այն լրացնելով ինչ-որ բանով:

Բոլորին հայտնի է երեխաների սերը գույնի նկատմամբ: Սակայն դաստիարակը չպետք է միջամտի այս կամ այն նկարի մեջ գույնի ընտրությանը: Ուղղակի դա թողնվում է երեխաների հայեցողությանը: Դրա հետ մեկտեղ, եթե մենք ցանկանում ենք ղեկավարել երեխայի ստեղծագործությունը, նկարելու նրա ամբողջ գործընթացը, ապա անհրաժեշտ է երեխաներին սովորեցնել, որ իրենք զգան գույնի համադրման գաղափարը, իսկ դրա համար անհրաժեշտ է ստեղծել նկարի այս կամ այն գունելության (կոլորիտի) ստացման համար բարենպաստ պայմաններ: Արտահայտչական երանգի ամենից հասարակ հասկացողությունը կապված է այնպիսի որոշիչների հետ,

ինչպիսիք են ուրախը և տխուրը, տոնականը և առօրեականը, արևայինը և իրիկնայինը և այլն: Տարբեր տրամադրությունների, բնության երևույթների, հասարակական կյանքի արտահայտման համար գունեղություն ստեղծելու հարցում չի կարող լինել որևէ միօրինականություն: Իսկ դրա համար միշտ էլ անհրաժեշտ է երեխաներին հնարավորություն ընձեռել ինքնուրույն ընտրելու գույնը և ինչ-որ երևույթի կամ դեպքի արտահայտման համար դրսևորելու անհատական ճաշակ: Հնարավոր է, որ նկարի մեջ գույնը չհամապատասխանի առարկայի իրական գույնին: Այդ դեպքում անհրաժեշտ է, որ ցույց տրվի, պարզաբանվի երևույթի ընդհանուր տրամադրությունը կամ բնույթը: Սակայն ամեն մի բովանդակություն չէ, որ գույնի մեջ պահանջում է արտահայտչություն: Մանկական նկարչության մեջ հաճախ բացարձակ ճշմարտություն չի լինում: Գնահատվում է միայն առարկայի կերպարը, նրա տարածական առանձնահատկությունը:

Այսպիսով՝ ստեղծագործական աշխատանքի մեթոդների ուսուցումը դառնում է իրական գործ՝ իր հիմքում ունենալով հատկապես արտահայտչական և տեխնիկական հնարքների ուսուցումը:

Նկարչության պարապմունքներին երեխաներին տրվում են կերպարի արտահայտման միջոցները, որոնք էլ իրենց հերթին զարգանում են ստեղծագործական գործընթացների տարբեր փուլերում: Իսկ դրանով հնարավորություն է ընձեռնվում զգալու ուրախության և դժվարության զգացումը՝ կապված ստեղծագործական նվաճումների հետ:

Երեխաների ստեղծագործական ղեկավարման այս ծրագիրը կարող է իրականացվել միայն այն պայմաններում, երբ դրանց հիմքում դրվում են արտահայտչամիջոցների ամենաանհրաժեշտ ձևերը: Իսկ եթե դրանք յուրացվեն կայուն և գիտակցված, ապա ամեն մի երեխայի մոտ առաջանում է ստեղծագործական նախաձեռնություն և ինքնուրույնության դրսևորման հնարավորություն: Այս դեպքում նկարչությունը յուրացվում է գիտակցաբար, զգացմունքներով և կարող է տալ երեխայի հոգևոր զարգացման մեծ արդյունք: